

Վարդանանց ոգեկոչական հատված Գևորգ Մեծի արվեստի կենտրոնի համար
Vardanank, frieze, detail, 580x670, 1995-1998 Cafesjian Center for the Arts

# ԳՐԻԳՈՐ ԽԱՆՋՅԱՆ

100 ԱՄՅԱԿ

Grigor Khanjyan



Կանաչ նռներ, կտավ, յուղաներկ, ընտանիքի հավաքածու
*Green Pomegranates*, oil on canvas, 49,5x54, 1999, family collection

GRIGOR KHANJYAN (1926–2000) is a celebrated Armenian painter and graphic artist renowned for his monumental and decorative works, People's Artist of Armenia (1967) and of the USSR (1983), and a full member of the National Academy of Sciences of the Republic of Armenia (1990).
Born in Yerevan, Khanjyan received his artistic education at the P. Terlemezyan College of Fine Arts in Yerevan and later at the Yerevan Institute of Fine Arts, where he studied from 1945 to 1951.
In his paintings, Khanjyan created thematic compositions and worked in different genres, including landscapes, portraits, and still lifes.
His worldview is most vividly expressed in his thematic and travel series, including works such as *Hands* (1980), *Favorite Artists* (1994–1996), *Italian Impressions* (1965–1966), *Spain* (1970), *Armenia – from the Years of My People's History* (1971), *And All This in Our Days* (1972–1973), and *Mexico* (1976).

His book illustrations are considered among the finest examples of Armenian book art, continuing a tradition that spans centuries. Notable works include illustrations for Hovhannes Tumanyan's *Sako of Lori* (1956), Khachatur Abovyan's *Wounds of Armenia* (1958), Paruyr Sevak's *The Unsilenceable Belfry* (1963–1965), and Gevorg Emin's *The Dance of Sassoun* (1975), among others.
Khanjyan's monumental murals, housed at the Cafesjian Center for the Arts, reflect key episodes from Armenian history, including *The Armenian Alphabet, Vardanank*, and *Renaissance* (1992–2000).
His works depicting the Virgin Mary adorn the altars of the Mother See of Holy Etchmiadzin, St. Vartan Cathedral in New York, and other churches.
Between 1960 and 2000, Khanjyan exhibited his works in solo and group exhibitions in Armenia, as well as across Europe, the United States, and Russia.
Throughout his life, Grigor Khanjyan received numerous honors, titles, and state awards for his significant contributions to Armenian art and culture.

Գ. Էմինի «Սասունցիների պարը» պոեմի նկարազարդում
թուղթ, յուղաներկ, Հայաստանի ազգային պատկերասրահ
Illustration of the poem *The Dance of Sassoun* by G. Emin
oil on paper, 34x47,5, 1975, National Gallery of Armenia





Աղասու երդումը. Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի նկարազարդում
ստվարաթուղթ, տուշ, Հայաստանի ազգային պատկերասրահ
*Aghasi's vow*. Illustration of the novel *Wounds of Armenia* by Kh. Abovyan
Indian ink on cardboard, 58x79, 1958, National Gallery of Armenia




Խանջյանի գրքային նկարազարդումները դարավոր ավանդույթներով հարուստ հայ գրքարվեստի լավագույն նմուշներից են՝ Հ. Թումանյանի «Լոռեցի Սաքոն» (1956 թ.), Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» (1958 թ.), Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» (1963–1965 թթ.), Գ. Էմինի «Սասունցիների պարը» (1975 թ.) և այլ:

Մոնումենտալ աշխատանքներում նա անդրադարձել է հայ ժողովրդի պատմության հերոսական էջերին՝«Հայոց այբուբեն», «Վարդանանք» և «Վերածնունդ» որմնանկարներ (1992–2000 թթ.): Խանջյանի վրձնած Տիրամոր պատկերները զարդարում են Սբ Էջմիածնի Մայր տաճարի, Նյու Յորքի Սբ Վարդան և այլ եկեղեցիների խորանները:

1960–2000 թթ. նկարիչն անհատական և խմբային ցուցադրություններով հանդես է եկել Հայաստանում, Եվրոպայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի տարբեր քաղաքներում:

Հայկական արվեստի և մշակույթի մեջ նշանակալի ներդրման համար Գրիգոր Խանջյանն արժանացել է մի շարք պարգևների, կոչումների և պետական մրցանակների:

ԳՐԻԳՈՐ ԽԱՆՋՅԱՆ (1926–2000 թթ.)՝ անվանի հայ գեղանկարիչ, գրաֆիկ, մոնումենտալ-դեկորատիվ գործերի հեղինակ, ՀԽՍՀ (1967 թ.) և ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ (1983 թ.), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1990 թ.):

Ծնվել է Երևանում: Գեղարվեստական կրթություն է ստացել Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում, ապա Երևանի գեղարվեստի ինստիտուտում (1945–1951 թթ.):

Գեղանկարչության մեջ Խանջյանն անդրադարձել է թեմատիկ կոմպոզիցիաների և տարբեր ժանրերի՝ բնանկար, դիմանկար, նատյուրմորտ: Նկարչի աշխարհայացքը վառ արտացոլվել է թեմատիկ և ճամփորդական շարքերում՝ «Ձեռքեր» (1980 թ.), «Սիրված նկարիչներ» (1994–1996 թթ.), «Իտալական տպավորություններ» (1965–1966 թթ.), «Իսպանիա» (1970 թ.), «Հայաստան՝ իմ ժողովրդի պատմության տարեթվերից» (1971 թ.), «Եվ այս ամենը մեր օրերում» (1972–1973 թթ.), «Մեքսիկա» (1976 թ.):



Հայոց այբուբեն, որմնանկար հատված
Գավիթ Սբ Աստվածածին եկեղեցուց
*Armenian Alphabet*, fresco, detail, 580x470, 1992–1994
Cafesjian Center for the Arts

**Central Bank**
of Armenia

Հայաստանի
Հանրապետության
**կենտրոնական բանկ**



Տիրամայրը Մանկան հետ, կտավ, յուղաներկ, 150x93, 1997
Նոր Նորքի Սբ Սարգիս եկեղեցի, Երևան

*Madonna and Child*, oil on canvas, 150x93, 1997
St. Sarkis church in Nor Nork, Yerevan

Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

The coin is minted at the Royal Dutch Mint.

Էսքիզների հեղինակներ՝
Լուսինե Լալայան (դիմերես),
ԷՄՔԵՅ ՍՊԸ (դարձերես):




Դիմերես՝ Գրիգոր Խանջյանի «Լեռներում» կտավը
(1972 թ., Հայաստանի ազգային պատկերասրահ):
Դարձերես՝ Գրիգոր Խանջյանի դիմապատկերը,
Գրիգոր Խանջյանի «Ձոն նկարիչներին» եռանկարի կենտրոնական
նկարից դրվագ (1978 թ., Մուրադյան գեղերի, ԱՄՆ):

Obverse: Grigor Khanjyan's painting *In the Highlands*
(1972, National Gallery of Armenia).
Reverse: Grigor Khanjyan's portrait, a fragment from the central painting
of Grigor Khanjyan's triptych *In Honor of Artists* (1978, Mooradian Gallery, USA).

| ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ | | TECHNICAL SPECIFICATION | |
|---|---|---|---|
| Անվանական արժեքը | 100 դրամ | Face value | 100 dram |
| Մետաղը/հարգը | արծաթ 925° | Metal/fineness | silver 925° |
| Քաշը | 28,28 գ | Weight | 28,28 g |
| Չափը | 28,0x40,0 մմ | Size | 28,0x40,0 mm |
| Որակը | լավացված | Quality | BU |
| Դրամաշուրթը | հարթ | Edge | even |
| Թողարկման քանակը | 300 հատ | Quantity of issue | 300 pcs |
| Թողարկման տարեթիվը | 2026 | Year of issue | 2026 |